ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն – Անդրեյ Ղուկասյան

2. Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ Լոռու մարզպետ

3.Գործուղման վայրը և ժամկետները – 2019 թվականի ապրիլի 22-ից 26-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ Պեկին և Շանսի նահանգ

4.Հրավիրող կողմը - Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսիի նահանգային իշխանություն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդիրների համար էր նախատեսված) - «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» խորագրով նախաձեռնությունների 2-րդ վեհաժողովին մասնակցելու, ինչպես նաև 2011թ.ից ՉԺՀ Շանսիի նահանգի հետ, արդեն որպես քույր մարզեր, համագործակցության համաձայնագրի կնքում:

6. Քննարկված թեմաները - Քննարկվել է երկու հանրապետությունների վարչական միավորումների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ, որի ուղղությամբ առաջարկվել են ռազմավարական նոր ծրագրերի մշակում ու իրականացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը - Այցի ընթացքում մարզպետ Ա.Ղուկասյանը մասնակցել եւ հանդիպումներ է ունեցել.

- Չինաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Սերգեյ Մանասարյանի, դեսպանատան աշխատակիցների, ինչպես նաև ապրիլի 24-ին հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ՝ հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- Մասնակցություն Պեկինում «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» խորագրով նախաձեռնությունների 2-րդ վեհաժողովին, ուր մարզպետ Ա.Ղուկասյանը հանդես է եկել ելույթով, ներկայացվել է Լոռու մարզի տնտեսական հնարավորությունների վերաբերյալ տեսաֆիլմ: Այնուհետև մարզպետը առանձնազրույց է ունեցել Շանսիի փոխնահանգապետի հետ,
- Մարզպետ Ա.Ղուկասյանը Պեկինում հանդիպել է Հայաստանի, Չինաստանի և Ռուսաստանի տարբեր ոլորտների գործարարների հետ,
- Շանսի նահանգում մարզպետը պաշտոնական հանդիպում է ունեցել Շանսիի նահանգապետ Վան Իսինի հետ
- Շանսիում հանդիպում է կազմակերպվել տեղի գործարարների և այլ պաշտոնատար անձանց հետ, ուր ներկայացվել են երկու մարզերի միջեւ հետագա համագործակցության հնարավորությունները և ուղղությունները (գյուղատնտեսություն, թեթև

արդյունաբերություն, հանքարդյունաբերություն, կրթություն, առողջապահություն և զբոսաշրջություն),

- Այցելություն է կազմակերպվել Շանսիի ծանր արդյունաբերությունը ներկայացնող Տայուանի TZ գործարան, որը հիմնադրվել է 1950թ-ին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը - Հանդիպման ժամանակ Պեկինում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսիի նահանգի միջև համագործակցության հարաբերությունների համաձայնագիր»: Ձեռք են բերվել բանավոր պայմանավորվածություններ փոխադարձ այցերի կազմակերպման համար, այդ թվում՝

- Չինական խոշոր տուրիստական ընկերության այց Լոռու մարզ, տեղում ծանոթանալու մարզի տուրիզմի զարգացման հնարավորություններին,
- Կրթության և առողջապահության ոլորտի մասնագետների և ուսանողների փորձի փոխանակում,
- Լոռու մարզում և Շանսի նահանգում մշակույթային օրերի կազմակերպում,
- Չինացի գործարարների այցելություն Լոռու մարզ,
- Մարզի գործարարների մասնակցություն Պեկինում ապրիլի 29-ից մեկնարկված եւ առաջիկա 6 ամիսներին ընթացող EXPO ցուցահանդեսին,
- Ս.թ սեպտեմբերին Շանսիում կայանալիք քույր մարզերի գործարար համաժողով-EXPO-ին մարզի գործարարների մասնակցության հրավիրում:

9. Ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները - Ակնկալվում է երկու մարզերի միջև համագործակցության ակտիվացում, գործնական քայլերի իրականացում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը – 2 մայիսի, 2019թ.:

X _____

ՀՀ Լոռու մարզպետ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ